

**ՆԵՏԱԿԱԼ ԲԱՌԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ
ՀԱՅԿԻ ԱՌԱՍՊԵԼԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Գ. Ա. ՄԱՂՈՍԱՆ

Դասական հայերենի բառարաններում այս բառը հիմնականում ստուգաբանվում է իբրև զինատեսակ. «ի, այց, գ. 1. Նետեր արձակելու տեղ՝ մարտկոց: 2. Պատերազմական մեքենայ, որով մեծ նետեր ու քարեր էին արձակում»¹: Նույնիսկ եթե բառն անջատենք առանձին արմատների, **ն ե տ +ա +կ ա լ** (ել)² իմաստն ու բացատրությունը լիովին ընդունելի են, բայցև մտորումների տեղիք տվող, որովհետև **կ ա լ ե լ ը** կարող ենք հասկանալ նաև **կ ա լ ո ղ - կ ա լ ի չ** (բռնող) ձևերով, որ առավել ընդլայնված իմաստ է ստանում:

Բառի հնագույն կիրառությունը, թերևս, Ս. Գրքինն է, ուր Երեմիայի պայծառատեսության մեջ ասվում է. «Առէք նշան ի վերայ երկրիդ, փող հարէք ընդ ազգս ամենայն, հրաիրեցէք ի վերայ դորա [Բաբելոնի] գունդս, պատուէր տուք յինն Արարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին. կանգնեցէք գնդաւ գ ն ե տ ա կ ա լ ս, ելէք ի վերայ. շարժեցաւ և չարչարեցաւ, զի եկն եհաս ի վերայ Բաբելոնի խորհուրդ Տեառն. երիվարք իբրև զբազմութիւն մարախոյ»³: Անկախ ամեն ինչից, հարց է առաջանում, թե ինչու է **ն ե տ ա կ ա լ ը** եզակի թվով: Հսկայական բանակը, մորեխի բազմությամբ հեծյալները, բոլոր ազգերին ուղղված շեփոհի կանչը և բոլորի առջևում միայն մեկ նետ կրակելու գործիք: Արդյոք քիչ չէ՞⁴:

Այստեղ, կարծում ենք, օգտավետ կլինի հատվածը համեմատել այլալեզու թարգմանությունների հետ.

Поднимите знамя на земле, трубите трубою среди народов, вооружите против него народы, созовите на него царства Араратские, Минийские и Аскеназские, поставьте вождя против него, наведите коней, как страшную саранчу.

Set up a standart in the land, blow the trumpet among the nations, prepare the nations against her, call together against her the kingdoms of Ararat, Mini, and Ashchenaz; appoint a captain against her; cause the horses to come up as the rough caterpillars⁵.

¹ Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, հատ. Բ, Եր., 2000, հմմտ. «Նոր բառգիրք հայկազգեան լեզուի», հատոր երկրորդ, Վենետիկ, 1837:

² «ԿԱԼՈՒԼ-Ունենալ, բռնել, արգելել» տե՛ս Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, հատ. Ա:

³ Երեմ. գլ. ԾԱ. 27: Այս և հետագա աստվածաշնչյան քաղվածները բերում ենք ըստ «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց» (Եր., 1997) գրքի: Այսուհետ շարադրանքի մեջ՝ ԱՍՄ և տեղը:

⁴ Ն ե տ ա կ ա լ ս. ըստ շարակարգի կարող է դիտվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով: Մերօրյա թարգմանության մեջ այն հոգնակիով է դրված՝ «**ն ե տ ա ձ ի գ ա ր ք ե ր**». տե՛ս «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների» (արևելահայերեն ճոր թարգմանություն), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1994, էջ 1235:

⁵ Библия. Книги священного писания Ветхого и Нового Завета. Канонические (При подготовке настоящего издания текст Синодального перевода 1876 года был сверен с еврейским текстом Ветхого Завета и греческим текстом Нового Завета). М., 1994, Иер. 51:27. Հմմտ. «The Layman's Bible Encyclopaedia», Nashville, Tennessee, 1964. «Ararat» հոդվածը:

Այն, որ Արարատյան թագավորության և Ասքանազյան գնդի միջև հայտնված Մարերի թագավորությունը կարող էր հանվել հայկական թարգմանություն-նից, ինչ-որ չափով ընդունելի է թվում, բայց որ մնացյալ բոլոր հարցերում բառացի նույնություն ցուցաբերող հատվածի մեջ առաջնորդ-հրամանատարը՝ փոխարինվել է նես կրակող գործիքով (անձի առում ունեցող գոյականը՝ իրի առում ունեցողով), կամ եզակի թիվը դարձել է հոգնակի, առնվազն զարմանալի է մեր սուրբ թարգմանիչների պարագայում: Սրանով իսկ կրկնակի հետաքրքրական է դառնում հայերեն թարգմանության տարընթերցվածը. «Կոչէք ի վերայ դորա զթագաւորութիւնս Արարատայ, Միւնոյ, և Ասքանազայ, կացուցէք ի վերայ նորա զօր ազլ ու խ, հանէք ի վերայ նորա զերիվարս իբրև զմարախ մագեղ» (ԱՄ. Երեմ. գլ. Ծ. 27 հատվածի տողատակ): Ասել է թե բնագրի բառն այնքան բարդ չէր, որ մեր թարգմանիչներին կատարյալ շփոթության մեջ գցեր՝ ո՛չ թիվն իմանալին, ո՛չ իմաստը: Ուստիև հարց է առաջանում՝ արդյո՞ք գոյական համարված **Նես ա կ ա լ** բառը գոյականաբար գործածված ածական չէ:

Եթե պատկերացնենք, որ Բաբելոնի կործանում ասելով պետք է հասկանալ Բել-Բելուս-Նեբրովթի իշխանության կործանումը, ապա այս պնդումը լիովին հասկանալի է դառնում, և տեսնում ենք, որ **Նես ա կ ա լ** ը ա ղ ե ղ ա վ ո թ ի հոմանիշն է և հավասարապես կարող էր կիրառվել Հայկ Նահապետի առնչությամբ:

Մեզ թվում է, որ նույն գլխի 3-րդ հատվածում գործածված **ա ղ ե ղ** և **ա ղ ե ղ - ն ա վ ո թ** կապակցությունները նույնպես վերաբերում են ոչ թե անորոշ աղեղնավորի, այլ հատկապես Հայկին. «Լարեսցե որ լարելոցն իցե զաղեղն իւր, և աոցե զանձամբ ոյր իցե զէն. մի՛ խնայէք լերիտասարդս նորա, և ապականեցէք զանձնայն զօրութիւն նորա» (ԱՄ): Նա, ով պետք է լարի իր աղեղը, կարող է Հայկը լինել, եթե ընդունենք, որ նա, ով զինավառ էր, իսկ ավելի ճիշտ՝ զենքի-զրափի մեջ էր, ինչ-որ անորոշ ոք չէ, այլ Բելը: Այս առթիվ հիշենք, որ մեր մատենագրության մեջ Բելը հատկաբար որպես հուսալիորեն զինված է հանդես գալիս հանդիպող տարբերակներում՝ «գլխանոց ագուցեալ երկաթի, նշանատրօք վերջիւք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց. գօտևորեալ զմէջսն, և լահելէ զսուրն երկասայրի. և նիզակ անարի ի ձեռին իւրում աջոյ, և լահելումն վահան...»⁷, «Բէլ զհետ նորա երթայր պնդագոյն հանդերձ զինակրան իւրով»⁸: Սրանք այնպիսի բնորոշումներ են Բելի առնչությամբ, ինչպիսիք, ասենք, Հայկի պարագայում «զեղազանգուրն» ու «հաստաբազուկն» են:

Սերեոսի տողերում կարելի է գտնել Բելի զինավառության և նրա զենքերի չափազանց մանրամասն նկարագրության պատճառը. այդ մանրամասները պետք է լսողի կամ ընթերցողի ենթագիտակցության մեջ մի միտք արթնացնեն. Տիտանյանը համոզված էր, որ ինքն անպարտելի կամ անխոցելի է. «Տիտանյան արքան սպառազինված և վստահ էր իր սպառազինությամբ»: Բաբելոնի առաջնորդի մասին նմանատիպ կամ գրեթե նմանատիպ մի արտահայտություն գտնում ենք Երեմիայի դիտարկվող գլխում, որը՝ իբրև աստվածաշնչյան այլընթերցված, տեղ է գտել տողատակում: Սերեոսյան և աստվածաշնչյան հատվածների համադրությունից հետո հավանորեն կարելի կլինի ասել, որ խոսքն իսկապես Հայկի և Բելի մասին է.

⁶ Ընդգծյալ *вождь* և *captain* բառերի համար տե՛ս *Англо-русский словарь*, М., 1975: Ըմմտ. **С. И. Ожегов**, *Словарь русского языка*, М., 1990:

⁷ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, կազմեցին՝ Մ. Աբելեան և Ս. Յարութիւնեան, Թիֆլիս, 1913, էջ 36: Այս գրքի հետագա հղումները շարադրանքի մեջ՝ Խոր. և էջը:

⁸ Պատմութիւն Սերեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 48: Այս գրքի հետագա հղումները շարադրանքի մեջ՝ Սեր. և էջը:

Լարեացէ զաղեղն իր աղեղնաւորն
ընդդէմ աղեղնաւորի, եւ որոյ
հպարտացեալն իցէ ի գրահն
իւր... (ԱՄ., Գ24. Է29)

Եւ արքայն Տիտանեան սպառազի-
նեալ, եւ վստահացեալ ի կուռ
սպառազիճութիւն անձին ի-
րոյ: (Սեբ. 50)

Մեզ թվում է՝ «վստահացեալը» և «հպարտացեալը» լոկ դերբայական ձևով չէ, որ իրար մոտենում են, այլ նաև իմաստային առումով, և երկու հատվածների հարազատությունն ակնհայտ է: Այստեղ գիտական սկզբունքայնությունը պահանջում է առաջին հայացքից մեր տեսակետները փլուզող մի հարցապնդում անել. իսկ մի՞թե Սեբեոս պատմիչը չէր կարող ազդվել Աստվածաշնչի ներկա հատվածից: Պատասխանը միանշանակորեն դրական պիտի լինի՝ այո՛, կարող էր: Բայց այս հանգամանքը ամենևին չի հակասում առաջ քաշվող մոտեցումներին, մեր պատկերացմամբ՝ մեկ այլ, շատ պարզ հարցապնդման պատճառով. իսկ ինչո՞ւ էր Բելին պատկերելիս Սեբեոսը ազդվում հենց այս նկարագրությունից: Փաստորեն հեղինակն ինչ-որ կապ էր տեսնում սրանց միջև, որ իր համար օրինակ չէր դարձնում, ասենք, Դավթի և Գողիաթի կոնիվը: Սա թերևս կարելի է ևս մի կովան համարել հօգուտ այն մտքի, որ **Ա ե տ ա կ ա լ** նշանակելիս է եղել նաև նետաձիգ, և դրա շարակարգում պատկերացվել է Հայկը:

Մարգարեի պայծառատեսության մեջ հետաքրքրական է նաև կովի հրավիրվող թագավորությունների հարցը («թագավորութիւնս Արարատայ, Միանոյ, և Ասքանազայ»): Ինչու էին մարերը հիշատակվում Արարատյան թագավորության և Ասքանազյան գոգի միջև: Ընդ որում, դա բոլորովին էլ կամայական երևույթ չէ, որովհետև հենց հաջորդ հատվածում դարձյալ խոսքը մարերի մասին է. «Հրաւիրէք ի վերայ նորա զազգս և զթագաւորն Մարաց, զգօրավարս նորա և զամենայն զօրագլուխս նոցա անդր, և զամենայն երկրի զիշխանութիւնս, Դնել զերկիրն Բաբելացոց յապականութիւն. զի մի՛ լինիցի ի մնա բնակչութիւն» (ԱՄ, Երե. ԾԱ. 28-29): Եթե 27-րդ հատվածում նետակալ-առաջնորդը պիտի ղեկավարեր Բաբելոնի կործանումը, այս հատվածներում իբրև ղեկավար հանդես է գալիս մարերի թագավորը, որ նորանոր կասկածների առիթ է հանդիսանում: Այսինքն, երբ Երեմիայի ԾԱ գլխի 27-րդ հատվածի աղեղնավորին փորձում ենք նույնացնել Հայկ նահապետի հետ, փաստորեն հակասում ենք նույն գլխի 28-29 հատվածներին:

Անշուշտ այստեղ ցանկալի կլինեն հարցը պարզաբանել պատմական ճշգրտիտ աղբյուրների միջոցով, որ մատնանշեին, թե այս կամ այն պատերազմում մարերի գունդը հանդես է եկել հայկական բանակի կազմում, որ և ցավոք չկան: Ուստի նյութի ստուգաբանման միակ հնարավոր աղբյուր կարող է լինել բանահյուսությունը, ուր բարեբախտաբար պահպանվել են նման ակնարկներ: Մեզ թվում է, որ մարերը կարող էին հենց այն հնաբանակները լինել, որոնց ենթարկեցրեց Հայկը: Ինչպես գիտենք, Արարաթի երկրից դուրս գալով, Հայկը շարժվում է հյուսիս-արևմուտք և հաստատվում մի «բարձրաանդակ դաշտում», որտեղի սակավ բնակիչները «ինքնակամ հնազանդեալ դիւցազիւնն» (Խոր. Ա 33): Երբ հասնում է Բելի դեմ պատերազմելու ժամանակը, հնաբանակները ևս միանում են Թորգոմյաններին. «Աստ ուշիմ և խոհեմ սկայն [Հայկը], քաջազանգուրն և խայտակնն, անապարեալ հաւաքէ գորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլսն և ս որ ընդ իւրով ձեռամբ...» (Խոր. Ա 35): Արդ-յոք սրանք մարեր չէի՞նք կարող լինել:

Անհասկանալի է նաև, թե ինչո՞ւ էին «Արարատեան թագավորութիւնները» շատ: Կամ ինչո՞ւ Արարատյան թագավորություն ասելով մարգարեն չի բավարարվում և հիշում է նաև Ասքանազյան գունդը: Եթե փորձենք ուղղակիորեն փոխադրել՝ կատացվի, թե «կանչեցե՛ք հայերին, մարերին և հայերին» (Ասքանազյան գունդը հայկական համարելու մասին քիչ հետո):

Գողթան մասունքներից մեկում կարողում ենք.

Արտաազգայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի,

Տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝

Նա անց, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ... (Խոր. Ա 84)⁹

Եթե նույնիսկ համարենք, որ իրականությունից նշույլ անգամ չկա հատվածում, բոլոր դեպքերում անբացատրելի է մնում, թե ինչու էր հայոց թագածառանգը հարազատ երկրից դուրս կառուցում իր նստավայրը: Թե, այնուամենայնիվ, պետք է կարծել, որ մարերը իր երկրում էին, իր հոր տիրապետության տակ: Հիշենք նաև, որ մի շարք հեղինակներ անգամ չեն էլ կասկածել, որ Մարաստանը Հայաստանի մի մասն է: Դրանցից հատկապես տեղին կլինի բերել Նիկիփոր վարդապետի տողերը, որ վերաբերում են մեր դիտարկված հատվածին. «Арменію въ Свящ. Писаніи разумѣютъ подъ названіями отдѣльных областей. Таковы: Араратъ, Минни, Аскеназъ и Өогарма; болѣе общее значеніе Арменіи усвояютъ названіямъ: Араратъ и Өогарма»¹⁰:

Մենք հակված ենք կարծելու, որ Երեմիայի դիտարկվող հատվածը պետք է հասկանալ մոտավորապես ներկա շարադրությամբ. «Կանչեցե՛ք նրա վրա Արարատյան թագավորությունները՝ մարերին և Ասքանազյան գունդը»: Իսկ «Մարաց թագաւորի» պարագան կարելի է հասկանալ երկու կերպով: Առաջին բացատրությունը տալիս է Գարագաշյանը (հենց այս հատվածի առնչությամբ). «Թագաւոր բառն ի հնումն միշտ չէր նշանակեր իշխան մեծագոր և տէր մեծամեծ երկիրներու: Թագաւոր անունը կը տրուէր շատ անգամ՝ առանձին քաղաքներու կամ սակաւ գիւղից և աւանաց միայն տիրող քաղաքներու իշխանաց, զորս պարտ էր մանաւանդ առաջնորդս կամ գլխաւորս կոչել: Քանանու պէս փոքր երկրի մը մէջ կային երեսուն և մի թագաւորք...»¹¹: Երկրորդ դեպքում, եթե ընդունում ենք, որ մարերը Հայկի իշխանության ներքո էին, բնականաբար նրանց թագավորին հիշատակելիս էլ Հայկն էր պատկերացվելու, ասել կուզի. «Կանչեցե՛ք նրա վրա Արարատյան թագավորությունները և նրանց թագավորին»:

Մյուս հանգամանքը, որին անպայմանորեն պետք է անդրադառնանք, հետևյալն է. մեր իրականության մեջ Հայկը համառորեն նույնացվել է Օրիոնի հետ: Նոր ժամանակներում գիտության համար ուղեմիջ է ծառայել Մ. Աբեղյանի դիտարկումը, որ նպատակահարմար ենք համարում բերել ամբողջաբար. «Մեր հին թարգմանիչներն օտար աստվածների ու դիցազների անունների տեղ դնում են համապատասխան հայկականները, կամ, ընդհակառակն, ինչպես՝ Զևս-Արամազդ, Ափրոդիտե-Աստղիկ, Հերակլես-Վահագն, այսպես և Օրիոն-Հայկ: Այս ցույց է տալիս, որ հսկա դիցազն Հայկն իր էական գծերով նման է եղել Օրիոնին: Աստվածաշնչի մեջ Օրիոն համաստեղությունը թարգմանված է Հայկ անունով: Այժմ ևս մի քանի կողմերում, ինչպես և մի ժողովրդական երգի մեջ, գտնում ենք Խէկ-Հայկ անունը նույն համաստեղության համար: Օրիոնը, հունական առասպելաբանությամբ, մի քաջ և անխոնջ որսորդ է, ծովի աստված Պոսիդոնի որդին, մի վիթխարի հասակով հսկա, քաջ առ ի կ ու ժ ի և գ եղ եց կ ո յ յ ա ն տ եր, Էոսի-Արշալույսի սիրականը: Նա համարձակվում է մերժել Արտեմիսի սերը և

⁹ Այն, որ մարերը կամ նրանց ինչ-որ պատանդված խումբ եղել են հայոց տիրապետության տակ և հատկապես Հայաստանի տարածքում, ավելի պարզորոշ երևում է Տիգրան-Ածաբակ պատմության վերջում (Խոր. 84), Արտավազդի կալանման պատմության մեջ (Խոր. 192) ևն: Կան և առավել հետաքրքիր օրինակներ, որ և չենք բերում եղածները բավականաչափ խոսում համարելով:

¹⁰ Տե՛ս «Библейская энциклопедия», Труд и издание архимандрита Никифора, М., 1891, Өогарма հոդվածը:

¹¹ Ա. Գարագաշեան, Քննական պատմութիւն Հայոց, մասն Ա, Թիֆլիս, 1895, էջ 13:

կան սկավառակ ձգելիս մրցության է հրավիրում նրան: Դրա համար այդ դիցու-
թի՛ն պատժում է նրան, կծել տալով մի կարիճի, որից և մեռնում է հսկան: Բայց հե-
տո անմխիթաբ մնալով նրա կորստի համար, դիցուհի՛ն նրան
փոխադրել է տալիս երկինք, ուր նա կազմում է ամենափայլուն համաս-
տեղություններից մեկը: Հայկը նույնպես մի գեղեցիկ (ընդգծումները մերն են-
Գ.Մ.) «դիցազն» է, «գեղապատշաճ և անձնեայ, քաջազանգուր, խայտակն և հաս-
տաբազուկ», «ի մէջ սկայիցն քաջ և երևելի»: Ապա՝ Հայկին իբրև որսորդ է ներկա-
յացնում և Բելի՝ նրան ուղղված խոսքը ըստ Սեբեոսի, «Կեսց ի տան իմում խաղա-
ղութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսակաւնս»: Հայկը և Օրիո-
նը, ուրեմն, նման նկարագիր ունեն, բայց Հայկի առասպելը, այսինքն՝ առասպելի
գործողությունը տարբեր է Օրիոնի մասին պատմվածից¹²:

Նախ ասենք, որ Հայկի կապակցությամբ գեղեցիկ որոշիչը որևէ տեղ չի
հանդիպում, առավել ևս «բացառիկ գեղեցկությունը»: Եթե անգամ բա-
վարարվենք արեղյանական սակավիկ շարադրությամբ, անմիջապես ուրվազըծ-
վում է Արա Գեղեցիկի պատումը, որ իսկապես զուգադրելի է: Իսկ այն, որ Օրիոն
համաստեղությունը Աստվածաշնչի թարգմանության մեջ փոխարինվել է Հայ-
կով, պարտադիր չէ, որ բանահյուսական հիմք ունենա: Հայերը կարող էին ան-
կախ ամեն ինչից և շատ ավելի վաղ այս համաստեղությանը տված լինել Հայկ ա-
նունը:

Իրականում վաղնջական շրջանի նյութի մեծագույն մասը դժվար վերա-
կանգնելի է: Այլևս ի՞նչ խոսք ապացուցելիության մասին: Այս է պատճառը, որ
ուղղակի աղբյուրների բացակայության հետևանքով ուսումնասիրողները հա-
ճախ ստիպված են եղել կողմնակի նյութերից քաղել իրենց պետքականը: Այս իսկ
պատճառով մեծ տարածում են գտել համադրական որոնումները:

Համադրական որոնումների մեջ ամենատարածվածը անունների հնչյունա-
կան նմանությամբ կատարվող բացահայտումներն են, որոնց մեջ, ինչ խոսք, կան
և բացարձակ ճշգրտություն ունեցող դեպքեր, ինչպես, ասենք, մեր Վիշապաքաղ
Վահագնի և հնդկական Վեհերեթորագնայի պարագայում է: Հարկ է նշել, որ հե-
րոսների անունների հնչյունական նմանությունները նրանց նույնացման համար
բավարար պատճառ չեն կարող լինել: Դրա համար անվանական նմանություննե-
րը իրենց հաստատումը գտնում են միայն գործողությունների նույնակի լինելուց
հետո:

Հնչյունական այսպիսի մի նմանություն մեզ հուշեց պրոֆ. Ա. Հնձացյանը:
Հայկ-Օրիոն-Արա վեպի մասին խոսելով՝ նա մատնանշեց, որ այնուամենայնիվ
Արա և Օրիոն բառերը նույն արմատն ունեն՝ ար (o = աւ) հնչյունական սկզբ-
բունքով: Նույնի օգտին են խոսում նաև երկուսի սպանման, սպանության դրդա-
պատճառի (մերժում), յուրովի հարության և շատ այլ հանգամանքներ: Այստեղից
էլ կարելի է բխեցնել այն միտքը, որ վիպական առումով Հայկի և Օրիոնի նույնա-
ցումն անկարելի էր:

Հնչյունական նմանությունների մասին խոսելիս չի կարելի լռության մատ-
նել հետևյալ օրինակները: Ասքանագ-Աշկենագ (u=շ և ք=կ) սրանով Ասքանա-
զը¹³ մեզնից օտարվում և վերագրվում է հրեաներին (նկատենք, որ թուրքական

¹² Մ. Աբելյան, Երկեր, հատ. Գ, Եր., 1968, էջ 31:

¹³ Ասքանագի՝ հայերի նախնի լինելու հարցը աներկբայելի է համարում Պետրոս
Կոստանդնուպոլսեցին: Համաձայնելով Լեոնորմանի հետ՝ վերջինս նշում է, որ ցայսօր էլ
Ասքանագից ծագող Աշխեն անունը գործածական է. տե՛ս Bedros de Constantinople,
Etude Philologique & Lexicographique Arménienne, Londres, 1945, էջ 48: Անադյանն անու-
նը մեկնում է պահլավերեն-պարսկերեն տառադարձումներով՝ փոխադրելով համարելով
նաև Աշխենը (տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Եր., 1942):
Նկատելի է, որ Պետրոս Կոստանդնուպոլսեցու բառարանին Աճառյանը ծանոթ չի եղել
(տե՛ս նույնի հատ. Ե, Եր., 1962, Մատենագիտություն բաժինը):

պատմագիտությունը շրջանառության մեջ է դրել “ашкеназские турки” արտահայտությունը. ասել կուզի, որ Ասքանազի համար միշտ էլ ժառանգորդներ կտանըվեն՝ միայն հրաժարվող լինի): Սակայն, ինչպես վերևում նշել ենք, անունների արտաքին մասնությունը նույնացման համար բավարար հիմք չի կարող հանդիսանալ. այն պետք է հաստատվի շարադրանքով: Իսկ շարադրանքը պարզ է. հրեա մարգարեի շուրթերով կատարյալ գորությունը տեղեկացնում է. «Կգամ Արարատյան թագավորությունները և կկործանեն Բաբելոնը»: Անկախ այն բանից՝ ընդունում ենք, թե ոչ, որ մարերը Հայկի տիրապետության ներքո էին, կամ Ասքանազյանները հայերն էին, թե ոչ, պետք է ընդունել մի բան. Երեմիան աշխարհագրական ճշգրիտ տեղանք է պատկերում: Թե այդ տարածքում դիտարկվող ժամանակահատվածում ինչ գործ կարող էին ունենալ «աշքենազյան հրեաները» և առավել ևս «աշքենազյան թուրքերը», այս մասին Աստվածաշունչը լուր է: Ասքանազի և հայերի մասին մեր մատենագրության հնագույն հիշատակությունը Մովսես Խորենացուն է՝ դարձյալ Երեմիայի քննվող պայծառատեսության առթիվ: Աստվածաշունչյան տողը Պատմահոր երկում չնչին տարբերություններ ունի: Կարելի է կարծել, թե «Հայոց պատմության» գրվելու պահին Ս. Գրքի այս հատվածը դեռևս ամբողջական թարգմանություն չի ունեցել, ուստի Խորենացին մի փոքր հեռանում է բնագրից: «Կարգ թագաւորաց մերոց և համար անցունց որդի ի հօրէ առնլով» գլխում նա գրում է. «Եւ զի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին»: Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ» (Խոր. Ա 67): Այստեղ ուշագրավ է «Այրարատեան թագաւորութեանն» ձևը՝ ի տարբերություն քննական բնագրի վերոբերյալ «Այրարատեան թագաւորութեանցն» հոգնակի կազմության: Բայց թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում մի բան է հաստատուն՝ թագավորությունը Այրարատյան է, իսկ գունդը՝ Ասքանազյան, այսինքն՝ երկրորդը առաջինի միավոր պետք է կազմի: Ինչպես ասենք՝ պարսից բանակը և մատյան գունդը:

Հնչյունական մասնության սկզբունքով բացահայտվող հարցերին է առնչվում նաև մեր վերոբերյալ մտքերից մեկը: Մեր կարծիքով, Բաբելոնի կործանում ասելով պետք էր պատկերացնել նրա տիրակալի՝ Բել-Բելուս-Նեբրովթի կործանումը:

Որտեղի՞ց է ծագում այս միտքը:

Եսայի մարգարեն Բաբելոնի կործանումը պատկերում է իբրև Բաբելոնյան աստվածների վերացում. «Անկաւ Բէլ, խորտակեցաւ Դազովն, եղեն դրօշեալք անցա ի գազանս...» (ԱՄ, Եսայի գլ. ԽԶ. 1): Ներկա օրինակում Բելը համընկնում է և՛ հնչյունական տեսանկյունից, և՛ այն պահով, որ Բաբելոնի գերագույն աստվածը կամ կառավարիչն է, որ պետք է ընկնի (ըստ Եսայու մյուս հատվածների) Նետակալի ձեռքով: Ռուսերեն բնագրում Բէլը հնչյունափոխվել է **Вил**-ի (Անգլերենում Bel է): Այս տարբերակը ևս ընդունելի է, եթե հաշվի առնենք, որ վ-ն և բ-ն իրար հավասար են (В=В): Բայց նկատենք նաև, որ ռուսերեն հնագույն տարբերակում այն եղել է հենց «բ» տառով **Бель**¹⁴: Հայերեն տարբերակում առկա է Դագովն բառաձևը: Մեր մատենագրության մեջ այն մեզ որևէ այլ տեղ, Աստվածաշունչից բացի, չի հանդիպել: Այստեղ, թերևս, կիրառելի է հնչյունական մասնությունների օրենքը, եթե վերցնենք ասենք ռուսերեն բնագրի **Нево** (“Пал Вил, низвергся Нево”) կամ անգլերենի **Nebo** ձևերը՝ երկուսն էլ գոնե հեռավոր մասնություն ունեն Նեբրովթի հետ, եթե չասենք, որ **Նեք** արմատը նույնն է:

¹⁴ Տե՛ս “Библейская энциклопедия”, համապատասխան էջը:

Եվ անուաների ուսումնասիրման հարցն ամփոփելով՝ կուզեմայինք քերել Հաբեթյանների անհշիղ հնչյունական նմանությունների մի քանի դիտարկում:

Հիշելով նրանց հսկայության հանգամանքը, Հայկի հաղթականությունը՝ մեզ թվում է, որ նրանց անունների արմատները պետք է ցույց տային ուժ և զորություն: Ահա մեզ երևացող մի շարք՝ *Ասքանագ-ասքայ-սկայ-հսկայ-Սկարոդի* (այստեղ հավանորեն կարելի է ավելացնել Հայկի թոռ *Պասքանին*): Հետաքրքրական է Թորգոմ անունը, որ հայերեն տարբերակով կարծես մեզանում ոչ մի հետք չի թողել, և շատերը, բառի հնչյունները փոփոխելով, այն մեզ հից բոլորովին օտարել են: Բայց օտար հորջորջմամբ եղած տարբերակը բացորոշ ցույց է տալիս, որ ազգի անվանադրության մեջ **Թորգոմ** անվան արմատը շոշափելի է՝ **Փորթոթա**: Եվրոպական մի շարք ժողովուրդների մոտ ուժ, բանակ և նման շատ բաներ կազմվում են հենց **Փորթա**-ի արմատից՝ *army* (բանակ)-*arm* (զենք, նակ բազուկ, *արմունկ*) *armada* ևն: Այս շարքերը հաշվի առնելով՝ կարելի է հիշել նաև *Ասկանիայից* Տրոյա եկած բանակը՝ Փորկոս-ի (**Փ**=[**թ**]որկ=[**զ**]ոմ) և *Ասկանիոս-ի* (*Ասքանագ*) հրամանատարությամբ¹⁵:

Սակայն անգամ հնչյունական կատարյալ միատարրության դեպքում մենք չէինք կամենա որևէ բան պնդել: Չէ՞ որ կա *Արարատ* և *Արարադ*, *Կրոնոս* և *Քրոնոս*, որ բոլորովին տարբեր բաներ են: Իսկ վերոնշյալ օրինակները իրավամբ կարելի է համարել խիստ հետաքրքրական, բայց և դժվարբացատրելի:

Հետաքրքիր ու անբացատրելի է նաև Հայկի երկարակեցությունը: Եթե պարզապես նշվեր, թե նա երկարակյաց է, ամեն ոք իր համար բացատրություն կգտներ: Բայց, չօգտագործելով երկարակյաց բառը, պատմիչները տալիս են կոտ շարադրանք. Հայկը *Բաբելոնից* հեռացավ և գնաց *Արարադ*, երբ ունեցավ իր *Արամանյակ* որդուն: *Արարադի* բնակավայրը նվիրեց *Կադմոսին*՝ *Արամանյակի* որդուն, իսկ *Կադմոսն* էլ այնպիսի տարիքի հասավ, որ պապի մոտ փախչելիս՝ ասում էր, գալիս եմ «կնաւ իմով և որդովք» (Մեք. 49): Այսինքն՝ պատերազմի ելնող Հայկը բավականին առաջացյալ տարիքի էր:

Եվ վերջապես անդրադառնանք երկու թվացյալ հակասության: Հայկական և աստվածաշնչյան տարբերակներում առաջին իսկ հայացքից նկատելի է և կարող է հակասություն համարվել այն հանգամանքը, որ Երեմիայի մոտ հաղթողներն իրենք են գալիս *Բաբելոն*, իսկ մեր պատմիչների պատկերած պատումում *Բելն* ինքն է զորխմբով շարժվում Հայկի երկիրը:

Անշուշտ բանահյուսական առումով այս հակասությունը հարցի վերջնական լուծում չի կարելի համարել: Սակայն կա և հարցի մյուս կողմը: Մեր պատկերացմամբ *Բելի*՝ *Բաբելոնից* դուրս սպանվելու օգտին է խոսում աստվածաշնչյան մեկ այլ հատված՝ Եսայի մարգարեի ԺԴ գլուխը, որ նույնպես *Բաբելոնի* կործանման մասին է: Այստեղ տեսնում ենք, որ ազգերի թագավորները անջեցին իրենց երկրրներում (տուն բառը կրում է նաև երկիր, աշխարհ իմաստը՝ տունն Թորգոմայ¹⁶), իսկ *Բաբելոնի* թագավորին սպասվում է ընկնել լեռան վրա (տրամաբանորեն՝ «որ ի տան իրում»)։ «Ամենայն թագաւորք ազգաց անջեցին պատուով՝ այր իւրաքանչիւր ի տան իրում. Եւ դու անկցիս ի վերայ լեռանց իբրև զմեռեալ...» (Եսայ. ԺԴ 18-19): Խորենացու շարադրանքում (Սեբեոսը չի մանրամասնում), իրոք, *Բելն* սպանվում է լեռան-բլուրի վրա¹⁷, որից իջել էր հարձակվելիս. «Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս...» (Խոր. Ա 37):

¹⁵ «Փոյուզացոց, հեռասահման Ասկանիայից, քերել էին

Ասկանոսն ու Ֆորգիսը, երկուսն էլ քաջ ու մարտատենչ»:

Տե՛ս Հոմերոս, Իլիական, հին հուն. քն. թարգմ.՝ Հ. Համբարձումյան, Եր., 1955, էջ 75:

¹⁶ Հմմտ. Ռ. Մ. Ղազարեան, Գրաբարի բառարան, հատ. Բ:

¹⁷ Այն, ինչ հայի համար բլուր է, հրեայի համար կարող է լեռ լինել: Բավական է հիշել Սիոն բլուր-լեռը:

Նման երևույթները պատումների մեջ բացատելի չեն և չեն ազդում գործողությունների բուն ընթացքի վրա: Այսինքն՝ առաջին թվացյալ հակասությունը՝ Բելի սպանման վայրի վերաբերյալ, որ առկա է մեր պատմիչների և Երեմիայի հատվածներում, Եսայու և Խորենացու հատվածները միասնակամացում է: Փաստորեն իրար հակասում են ոչ թե Աստվածաշնչի և Պատմահոր հատվածները, այլ երկու մարգարեների՝ Բաբելոնի տիրակալի կործանման վայրի պատկերները:

Հաջորդ թվացյալ հակասությունը արդեն երկու մարգարեների տեսիլներում է: Սակայն մենք հակված ենք կարծելու, որ Երեմիայի մարգարեությունը և Եսայու՝ Բաբելոնի կործանման տեսիլը կարելի է նույնացնել, հաշվի առնելով, որ Երեմիայի (ՕԱ, 27) միտքը Եսայու մարգարեության մեջ ամբողջական գլխով է, բայց նյութը, ինչպեսև շարադրանքի հաջորդակամությունը միակերպ են: Բացի այդ, Երեմիայի հիշատակած Արարատյան թագավորությունները Եսայու կողմից պատկերավորաբար ներկայացվել են երկնային մարմինների տեսքով, որոնք «Աստծու գայրույթից պետք է լույս չտան»: Ինչ խոսք, սա կործանման յուրօրինակ վերարտադրություն է: Սակայն պատկերի՝ ոչ վերացական և Հայկյանների մասին լինելու օգտին է խոսում մարգարեի այս հատվածը. «...դիմեալ գան սկայք յագեցուցանել զսրտմտութիւն իմ. խնդան՝ գան միանգամայն, և թշնամանեն:... Տէր զօրութեանց հրաման ետ ազգաց սպառազինաց, Գալ յերկրէ հեռաստանէ ի ծագաց հիմանց երկնից...» (Եսայ. ԺԳ 4-5): Փաստորեն «հսկաները» շատ հեռու երկրից էին գալիս՝ համարյա երկնքից: Եվ այս տեսանկյունից նայելու դեպքում պետք է այլ կերպ հասկացվի «Զի աստեղք երկնից՝ Հայկիւն հանդերձ և ամենայն զարդուն երկնից լոյս մի՛ տացեն...» (Եսայի ԺԳ 10) միտքը:

Հիմա փորձենք զուգարդել երկու մարգարեների տեսիլները: Ինչպես ասել ենք, Երեմիայի փոքրիկ հատվածը Եսայու մոտ հանդես է գալիս ամբողջական գլխով, ուստի աշխատել ենք Եսայուց քաղել Երեմիայի բուն շարադրանքին համապատասխանող տողերը միայն.

ԵՍԱՅԻ ԺԳ

Ի վերայ լերինն դաշտականի առէք
նշան, բարձրացուցէք զբարբառ ձեր ի
վերայ նոցա... դիմեալ գան սկայք յագեցուցանել զսրտմտութիւն իմ. խնդան՝ գան միանգամայն, եւ թշնամանեն:... Տէր զօրութեանց հրաման ետ ազգաց սպառազինաց, Գալ յերկրէ հեռաստանէ ի ծագաց հիմանց երկնից... Զի աստեղք երկնից՝ Հայկիւն հանդերձ եւ ամենայն զարդուն երկնից լոյս մի՛ տացեն... Ահաասիկ յարուցանեմ ի վերայ ձեր զՄարս...

ԵՐԵՄԻԱ ՕԱ

Առէք նշան ի վերայ երկրիդ,
փող հարէք ընդ ազգս ամենայն,
հրաւիրեցէք ի վերայ դորա գունդս,
պատուէր տուք յինէն Արարատեան
թագաւորութեանցն եւ Ասքանազեան
գնդին. կանգնեցէք զնովս զգնետակալս, ելէք ի վերայ.
շարժեցաւ եւ չարչարեցաւ, զի եկն
եհաս ի վերայ Բաբելոնի խորհուրդ
Տեառն... Հրաւիրեցէք ի վերայ
նորա զազգս եւ զթագաւորն Մարաց...

Այն, որ Եսայու և Երեմիայի պայծառատեսությունները նույնություն են ցուցաբերում, երևում է խոսքի հաջորդակամությունից: Երկու դեպքում էլ սկզբում Բաբելոնի դեմ պատերազմի դրոշ բարձրացնելու կոչն է: Նախ, երկուսն էլ Բաբելոն անունը չեն գործածում, այլ կիրառում են դերանուններ. Երեմիան՝ դորա- (պետք է հասկանալ Բաբելոնի), Եսային՝ դոցա- (պետք է հասկանալ բաբելացիների): Դրոշ բարձրացնելու կոչին հետևում է մի դեպքում երկնային լուսատուներ-

րի խավարման, մյուսում թագավորությունների հրավիրման սպառնալիքը: Եվ երկու դեպքում էլ խոսքն ավարտվում է մարերի և նրանց թագավորի կանչվելով: Այսինքն՝ պատումների սկիզբն ու վերջը բառացիորեն միահամուռ են, ուրեմն միջին մասն է տարբեր: Ո՛չ, նույնն է, եթե ընդունենք, որ մի դեպքում հավաքված են երկրային ազգերը Նեոսակալի՝ Հայկի առաջնորդությամբ, իսկ մյուսում երկնային լուսատուները՝ դարձյալ Հայկի գլխավորությամբ:

«Թագուհի թարգմանութեանց» կոչումն ստացած մեր աստվածաշունչ մատյանի դիտարկված կտորները բոլոր մյուս թարգմանություններից հեռանում են հենց այս երկու բառերով՝ Հայկ և Նեոսակալ, որոնցով էլ ճշգրտություն են մտցրնում շարադրանքի մեջ:

Г. А. МАДОЯН - *Попытка трактовки слова «նեոսակալ» в свете легенды о Гайке.* - Автор приводит из Библии видения пророков Иеремии и Исаии о разрушении Вавилона, сравнивает наличные образы и намеки, обращает внимание на упомянутые там имена (Вил-Бел, Нево), находя сходство с сохранившимися в армянской мифологии именами Бэла и Небровт Титанида. Из всего этого вытекает идея о том, что библейская история о гибели Вавилона сопоставима с легендой о Гайке и Бэле. В качестве доказательства приводятся соответствующие фрагменты из Мовсеса Хоренаци и Себеоса. Рассматриваются обстоятельства прародительства Фогарма и Асканазы, затрагивается вопрос о нахождении Мидии в доисторические времена под армянским владычеством, из чего следует, что упомянутый у Иеремии во фрагменте 51:27 «вождь» это праотец армян Гайк.